

ՀՀ ՎԱՐՁԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՎԱՐՁԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Քուշկյան	ՀՀ առողջապահության նախարար
Ս. Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ պատգամավոր
Ա. Ալավերդյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Սաֆարյան	«Հայրենական ապրանք արտադրողների միություն» ՀԿ-ի նախագահ, ՀՀ հանրային խորհրդի ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ
Բ. Ենգիբարյան	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Զ. Մակբեթ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար

Ա. Չալարյան	«Մաքենզի» միջազգային խորհրդատվական ընկերության գործընկեր
Մ. Հերզնյան	«Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն
Ա. Գրիգորյան	«Հայկական կոնյակագործների միություն» ԻԱՄ-ի նախագահ
Ա. Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» ՀԿ-ի նախագահ
Գ. Գևորգյան	Հայ ոսկերիչների միջազգային ասոցացիայի նախագահ
Ս. Բեկիրսկի	«Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության գործատուների միություն» ՀԿ-ի համանախագահ
Ս. Զաքարյան	«Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» իրավաբանական անձանց միության տնօրեն
Է. Գրիգորյան	Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միության նախագահ
Ա. Սալաթյան	«Նեյշնլ Ինստրումենտս Արմենիա» ընկերության տնօրեն
Գ. Աբրահամյան	«Դի Սի Էյ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ
Ս. Մաթևոսյան	«Լիկվոր» ՓԲԸ-ի տնօրեն
Տ. Հարությունյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)
Հ. Միրզոյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արդյունաբերության քաղաքականության վարչության պետ
Ա. Խուդոյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ

1. Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին

(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի զեկույցը՝ արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին:

2. ՀՀ կառավարության և կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտների ներկայացուցիչների միջև կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարությունների իրականացման վերաբերյալ հուշագրերի քննարկում

(Տ. Դավթյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ ՀՀ կառավարության և կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտների ներկայացուցիչների միջև կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարությունների իրականացման վերաբերյալ հուշագրերի կնքման առաջարկությանը:

3. Կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային խորհուրդների քարտուղարությունների ստեղծման մասին

(Ռ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն Ռ. Հարությունյանի զեկույցը՝ Կոնյակագործության և Դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային խորհուրդների քարտուղարությունների ստեղծման մասին:

4. 2012-2015 թվականների կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրերի նախագծերի մշակման ընթացքի մասին

(Մ. Հերգնյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ.Դավթյանին՝ «Հայկական կոնյակագործների միություն» ԻԱՄ-ի նախագահ Ա. Գրիգորյանի և «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն Մ. Հերգնյանի հետ համատեղ կոնյակագործության ոլորտային խորհրդում քննարկել և գնահատել իզոտոպային լաբորատորիաների հիմնման արդյունքում ակնկալվող ռիսկերը (նաև խաղողագործության ոլորտի հետագա զարգացման տեսանկյունից), և փոխհամաձայնեցված արդյունքները գեկուցել Արդյունաբերական խորհրդի հաջորդ նիստում.

2) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին՝ մշակել փոքր գյուղացիական տնտեսությունների զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում դիմելով ՀԲ-ին՝ տեխնիկական օժանդակություն ստանալու նպատակով:

5. Հայաստանի գինեգործության ոլորտային ռազմավարության մշակման ընթացքի մասին

(Մ. Հերգնյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5-րդ հարցը քննարկվեց օրակարգի 4-րդ հարցին զուգահեռ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ